



ISSN 1829-4820

Филиал МГУ им. М.В. Ломоносова
в г. Ереване

№17(21)

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ

СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES

IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

«НАУКА ЕСТЬ ЯСНОЕ ПОЗНАНИЕ ИСТИНЫ, ПРОСВЕЩЕНИЕ РАЗУМА»

АЛЕ. ЛОМОНОСОВ, «РИТОРИКА» (1748г.)

2026

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական
համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета
им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

17 (21)

ԵՐԵՎԱՆ 2026

ЕРЕВАН 2026

YEREVAN 2026

*Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի
անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից*

*Печатается по решению Ученого совета филиала Московского государственного
университета им. М.В. Ломоносова в г. Ереване*

*Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State Univer-
sity M.V. Lomonosov in Yerevan*

«ՈՌԻՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԻՐՆԵՐ» գիտամեթոդական հան-
դեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի
մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրու-
թյուն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնա-
կանների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսա-
յականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորու-
թյան ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала **«ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ
РУСИСТИКИ»** рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как
отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения
внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым
популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов,
грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №17
(21). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2026. – 306 с.

ISSN 1829-4820

*Журнал входит в список периодических изданий **BAK PA***



 ORCID: 0000-0002-4377-1601

 ORCID: 0000-0001-9263-6791

© Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване

ОСОБЕННОСТИ ПЕРЕВОДА ЕДИНИЦ, ОБОЗНАЧАЮЩИХ ВОЗРАСТ, В АНГЛИЙСКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ

Мариам Артуровна Адамян
mariam@leadavenue.com

*К.ф.н., преподаватель кафедры английской коммуникации,
Государственный университет имени В.Я. Брюсова,
Ереван, Республика Армения*

АННОТАЦИЯ

В статье рассматриваются переводческие особенности единиц, обозначающих возраст, в английском и армянском языках. Анализ проводится в рамках теории перевода с опорой на концепции эквивалентности и переводческих трансформаций. Особое внимание уделяется таким видам перевода, как эквивалентный, калькирование, описательный и приближительный перевод. Исследование выявляет случаи переводческих лакун, обусловленных лексическими, стилистическими и культурными различиями между языками. Делается вывод о том, что выбор переводческого приема зависит от контекста, цели перевода и необходимости сохранения смысловых и стилистических особенностей исходного текста.

Ключевые слова: перевод, переводческие трансформации, эквивалентность, калькирование, описательный перевод, приближительный перевод, семантическое поле «возраст».

Թարգմանությունը մարդկային գործունեության բարդ և բազմա-
կողմանի գործընթաց է, հետևաբար, այն տարբեր գիտությունների հե-
տազոտման առարկա է: Ըստ թարգմանության հայտնի տեսաբան Վ. Կո-
միսարովի՝ թարգմանությունը տարբեր մշակույթների և անհատների,
տարբեր մտածողությունների, տարբեր գրականությունների և ժամա-

նակաշրջանների, զարգացման տարբեր մակարդակների և ավանդույթների բախում է [4: 7]:

Այսօր առանձնացվում են թարգմանական փոխակերպումների բազմաթիվ դասակարգումներ, որոնք համարվում են թարգմանչի «գործիքները» և օգնում են առավելագույնս փոխանցել բնագրի առանձնահատկությունները: Փոխակերպումները, որոնց օգնությամբ հնարավոր է անցում կատարել բնօրինակից թարգմանվածքին, կոչվում են թարգմանական (միջլեզու) փոխակերպումներ [4: 140]: Համարժեքությունը կամ համարժեքը թարգմանության հիմնական հասկացություններից է, և թարգմանության տեսության մեջ գոյություն ունեն համարժեքության տարատեսակ սահմանումներ: Ի. Ռեցկերը համարժեք է համարում «անփոփոխ տարիմաստ համապատասխանությունը, որը, որպես կանոն, կախված չէ համատեքստից» [7: 10]: Ըստ Լ. Բարխուդարովի՝ «համարժեք է այն թարգմանությունը, որն իրականացվում է այն մակարդակում, որն անհրաժեշտ է և բավարար՝ անփոփոխ բովանդակության փոխանցման համար՝ թարգմանվող լեզվի կանոնների պահպանմամբ» [8: 47]: Ըստ Ջ. Քերֆորդի՝ «համարժեքությունը պետք է սահմանվի էմպիրիկ կերպով, թարգմանվածքների և վերջիններիս բնագրերի համադրման ճանապարհով» [1: 20]: Վ. Կոմիսարովը ձևակերպել է համարժեքության մակարդակների տեսությունը, համաձայն որի՝ թարգմանական գործընթացում բնագրի և թարգմանվածքի համապատասխան մակարդակների միջև սահմանվում են համարժեքության հարաբերություններ [4: 51]:

Ներկայումս թարգմանության տեսության մեջ կիրառվում են թարգմանական բազմաթիվ հնարներ, և տեսաբաններն առաջարկում են թարգմանության մի շարք տեսակներ՝

- **համարժեք թարգմանություն,**
- **գրադարձություն,**

- տառադարձում,
- պատճենում,
- նկարագրական թարգմանություն,
- մոտավոր թարգմանություն,
- հականիշային թարգմանություն,
- փոխակերպական թարգմանություն և այլն:

Նշենք, որ մեր ուսումնասիրության շրջանակներում անգլերենի բացատրական բառարաններից դուրս է բերվել «տարիք» իմաստ արտահայտող թվով 69, իսկ հայերենի բառարաններից՝ 119 միավոր, Մեր ուսումնասիրած նյութում հանդիպել ենք միայն պատճենման, ինչպես նաև համարժեք, նկարագրական և մոտավոր թարգմանությունների տեսակներ:

Համարժեք է համարվում այն թարգմանությունը, որը ճշգրտորեն փոխանցում է տեղեկատվությունը լեզվից լեզու [3: 65]: Մեր կողմից ուսումնասիրվող նյութը լի է համարժեք թարգմանված միավորներով, օրինակ՝ *old – ծեր, young – երիտասարդ, adult – չափահաս, mature – հասուն, boy – տղա, girl – աղջիկ, age – տարիք, man – տղամարդ, woman – կին, child – երեխա, junior – կրտսեր* և այլն:

Պատճենումը բառի ձևային առ ձևային թարգմանությունն է, որը ստեղծվում է այլ լեզվի համապատասխան միավորի կազմության կադապարով և նրա ընդօրինակմամբ: Ըստ Գ. Տոմախինի՝ սա ընդամենը բառացի թարգմանություն է, մինչդեռ Վ. Կոմիսարովը և Ա. Ֆյոդորովը այս մեթոդը համարում են նոր բառի ստեղծում: Նշենք, որ Վ. Վինոգրադովն առաջարկում է սույն հնարն օգտագործել նույնիսկ հեղինակային նորաբանություններ կամ գիտական եզրույթներ թարգմանելիս [8: 47]:

Պատճենման օրինակները կարող են լինել լրիվ կամ լիակատար և մասնակի, և կարող են դրսևորվել իմաստային կամ կառուցվածքային եղանակներով: Իմաստային պատճենումներում կադապարային նշա-

նակումներ չեն լինում կամ գրեթե չեն լինում. կարևորը բնագիր լեզվի կրկնօրինակմամբ բառ կազմելն է, ինչպես օրինակ հայերեն «*բացատ*» բառն այժմ օգտագործվում է անգլերեն «*space*» կամ ռուսերեն «*пробел*» բառերի իմաստով, կամ «*գլուխ*» բառի «*գրքի գլուխ*» իմաստավորումը կատարված է հունարենի հետևողությամբ [12]:

Կառուցվածքային պատճենումներում զուգահեռությունը և՛ իմաստային, և՛ կադապարային է: Օրինակ՝ անգլերենի «*sky-scraper*» բառը հայերենում թարգմանվել է որպես «*երկնաքեր*»: Մասնակի պատճենումների՝ կիսապատճենումների կադապարատարբերը արտահայտվում են և՛ փոխառյալ, և՛ մայրենի միավորներով, ինչպես՝ *автостоянка* – *ավտոկանգարան*, *кинозвезда* – *կինոաստղ* [12]:

Մեր ուսումնասիրության շրջանակներում վեր ենք հանել պատճենման հետևյալ բառազույգերը, որոնք պատկանում են սույն թարգմանության լիակատար տեսակին՝ *long-lived* – *երկարակյաց*, *elderly* – *հասակավոր*, *grown-up* – *մեծահասակ*, *teenage/r* – *դեռահաս/ակ*, *new-blown* – *նորաբողբոջ*, *newborn* – *նորածին*:

Նկարագրական թարգմանությունը բառի՝ ընդլայնված բառապաշարի օգնությամբ թարգմանությունն է: Այս հնարը համարվում է երկարաշունչ և ծանրաբեռնող, այդ պատճառով թարգմանիչները հաճախ խուսափում են այն կիրառել՝ նախապատվությունը տալով թարգմանական այլ հնարների, որպեսզի պահպանվի տեքստի հնարավոր հակիրճությունը [6]: Հետաքրքրական է, որ մեր ուսումնասիրության շրջանակներում հայտնաբերվեց այսպիսի թարգմանության ընդամենը մեկ օրինակ՝ հայերենից անգլերեն. *մանկամարդ* (*երիտասարդ, դեռահաս, ջատ ջահել*) բառը թարգմանվում է որպես *young woman, young lady* (երիտասարդ կին): Ընդ որում՝ պետք է նշել, որ թարգմանության արդյունքում ունենք հավելյալ իմակի կիրառություն, այն է՝ կոնկրետ սեռի պատկանելությունը:

Անգլերեն լեզվանյութի բառարաններից դուրսբերման արդյունքում հանդիպեցինք «տարիք» իմաստ արտահայտող այնպիսի միավորներ, որոնք ծագել են լատիներենում, այնուհետև անցել են անգլերենին և ցույց են տալիս տարիքը տասնամյակներով: Այդ միավորներն են՝

1. **Denarian** (տասից տասնինը տարեկան)
2. **Vicenarian** (քսանից քսանինը տարեկան)
3. **Tricenarian** (երեսունից երեսունինը տարեկան)
4. **Quadragenarian** (քառասունից քառասունինը տարեկան)
5. **Quinquagenarian** (հիսունից հիսունինը տարեկան)
6. **Sexagenarian** (վաթսունից վաթսունինը տարեկան)
7. **Septuagenarian** (յոթանասունից յոթանասունինը տարեկան)
8. **Octogenarian** (ութսունից ութսունինը տարեկան)
9. **Nonagenarian** (իննսունից իննսունինը տարեկան)
10. **Centenarian** (հարյուրից հարյուր ինը տարեկան)
11. **Supercentenarian** (հարյուր տասը և բարձր տարիքի):

Այդ բոլոր միավորները հայերենում վերարտադրվում են նկարագրական թարգմանության միջոցով:

Մոտավոր թարգմանության կիրառումը ենթադրում է ոչ համարժեք, մոտ թարգմանություն: Այս մեթոդի կիրառման ժամանակ, որպես կանոն, թարգմանվածքի բառապաշարն արտահայտվում է չեզոք երանգավորմամբ: Մոտավոր թարգմանությունն օգտագործվում է կենցաղն ու նրա հետ առնչվող իրողություններ թարգմանելիս, իսկ ազգային-մշակութային առանձնահատկությունները թարգմանության այս մեթոդը չի փոխանցում [11]: Ուսումնասիրվող նյութում հայտնաբերվել են մոտավոր թարգմանության մի քանի հետաքրքիր օրինակներ: Անգլերենի **stripling, sapling, shaver, beardless** միավորները հայերենում թարգմանվում են ընդամենը մեկ բառով՝ որպես *սլատանի*, իսկ **adolescent**,

juvenile, teenager, minor, verdant, immature միավորները՝ որպես *դեռահաս*: Այս օրինակները ցույց են տալիս, որ նշված տարիքային խմբերին անգլերենը ցուցաբերում է ավելի տարբերակված մոտեցում, քան հայերենը:

Մյուս կողմից, հայերենն ավելի տարբերակված մոտեցում է դրսևորում «ծեր», «դեռահաս» և «նորածին» տարիքային խմբերում: Այսպես, *ահել/ահիլ, բազմատի, բյուրամյա, երկարարև, դեռաբողբոջ, դեռաբույս, դեռածաղիկ, տղայահասակ, ջահել-ջիվան, կանխահասակ, ծաղկահասակ, ծաղկատի, աղածրի, դեռածին, մատաղաբույս, մատաղածին, մատաղատի, նորածիլ* միավորներն ընդհանրապես չունեն իրենց համարժեքներն անգլերենում, այսինքն՝ առկա են թարգմանական բացեր:

Այս բացերը կարելի է լրացնել հայերենի այսպիսի բառերի հոմանշային շարքից որևէ միավորի համարժեք թարգմանությամբ: Օրինակ՝ *ահել/ահիլ, բազմատի, բյուրամյա, երկարարև* բառերը հոմանշային շարք են կազմում **ծեր** բառի հետ, որն անգլերենում ունի համարժեք թարգմանություն, այն է՝ **old**, հետևաբար, այս միավորների թարգմանական բացը կարելի է լրացնել «old» բառով: **Նոր/դեռածիլ, մատաղածին, դեռակազմ** բառերը հոմանշային շարք են կազմում **նորածին** բառի հետ, որի անգլերեն համարժեքն է **newborn** բառը, հետևաբար, այս շարքի բոլոր միավորները անգլերենում կարող են առկայացվել «newborn» բառով:

Նշենք, սակայն, որ այսպիսի դեպքերում կորչում են բնագիր բառերի ոճային յուրահատկությունները: Հետևաբար, շատ անգամ, երևի թե, ավելի նպատակահարմար է տալ դրանց անգլերեն նկարագրական կամ համատեքստային թարգմանությունները, օրինակ՝ **մատաղածին – newly born, երկարարև – having lived long life** և այլն:

Այսպիսի լեզվական բացերը թարգմանության մեջ կարող են կապված լինել մշակութային տարբերությունների հետ: Դիտարկելով միավորների՝ անգլերեն համարժեքներ չունեցող վերոնշյալ շարքը՝ նկատում ենք, որ դրանցից շատերը բառարանում ամրագրված են որպես ոճականորեն նշույթավորված միավորներ: Այսպես, *սահել/սահիլ, ջահել-ջիվան* միավորները բառարանում ներկայացված են որպես ժողովրդական ոճին պատկանող (*Սահել/սահիլ – Ժողովրդական 1. Ծերունի, ծեր 2. Տարիքոտ, ծերացած*), (*Ջահել-ջիվան – Ժողովրդական 1. Շատ երիտասարդ*): *Աղածրի* ածականը բառարանում բացատրվում է այսպես՝ *Բանաստեղծական 1. Մատղաշ, մատաղահաս, փոքր*, իսկ *կանխահասակ* և *տղայահասակ* ածականներն ամրագրված են որպես հազվադեպ կիրառվող միավորներ (*Կանխահասակ – Հազվադեպ 1. Հասակը, տարիքը չբոլորած*) (*Տղայահասակ – Հազվադեպ 1. Պատանեկան հասակում եղող, դեռահասակ, մանկահասակ*):

Այստեղ հարկ է հաշվի առնել, սակայն, ակադեմիկոս Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» հրատարակման տարեթիվը՝ 1976, և սույն բառերի ոչ այնքան լայն կիրառությունը մերօրյա իրականության մեջ:

Երբեմն թարգմանվող լեզվի համարժեքն ունենում է ավելի ընդհանրական բնույթ, որն իր մեջ ներառում է մի քանի հասկացություն, նույնիսկ՝ մշակութայնորեն նշույթավորված: Այսպիսի թարգմանությունը տարբեր տեսաբաններ տարբեր կերպ են անվանում: Օրինակ՝ Վ. Վինոգրադովն այն անվանում է *սեռաստեսականիչ թարգմանություն* / гипогиперонимический перевод [3: 224], Ա. Ֆեոդորովը՝ *հիպոնիմիզմ* / гипонимический [10: 171], իսկ Գ. Տոմախինն այսպիսի թարգմանությունն անվանում է փոխակերպում [9: 13], ինչը հիմնականում կիրառվում է նախադասություններ թարգմանելիս, քանի որ թարգմանական այս հնարը ներառում է բառաքերականական փոփոխություններ, ինչ-

պես նաև այնպիսի բառերի թարգմանություն, որոնց համարժեքն առկա չէ թարգմանող լեզվում: Նշենք, որ «տարիք» իմաստային դաշտի անգլերենից հայերեն և հակառակ ուղղությամբ արված թարգմանություններում վերոնշյալ տեսակի կիրառությունը չհայտնաբերվեց:

Ամփոփելով ասենք, որ տեսաբանների հիմնական մոտեցումների վերլուծությունը ցույց է տալիս, որ թարգմանական հնարների միջև սահմանը խստիվ չէ, և դրանք երբեմն նույնիսկ կարելի է գուգադրել, առանձնացնել տարբեր տիպեր, տեսակներ, մակարդակներ: Այս կամ այն մոտեցման գործնական կիրառությունը որոշվում է՝ ելնելով թարգմանչի նպատակներից և խնդիրներից, իսկ բնագրի և թարգմանվածքի միջև համարժեքությունը կարող է ձեռք բերվել ինչպես բազմազան թարգմանական հնարների (հավելում, փոխհատուցում, խոսքիմասային փոխակերպում), այնպես էլ տարբեր տեսակի թարգմանությունների միջոցով:

ЛИТЕРАТУРА

1. Catford J.C. A linguistic theory of translation: an essay in applied linguistics. – London, Oxford University Press, 1965. – 103 p.
2. Бархударов Л.С. Язык и перевод (Вопросы общей и частной теории перевода). – М.: «Междунар. отношения», 1975. – 240 с.
3. Виноградов В.С. Введение в переводоведение (общие и лексические вопросы). – М.: Изд-во института общего среднего образования РАО, 2001. – 224 с.
4. Комиссаров В.Н. Современное переводоведение: Учебное пособие. – М.: ЭТС, 2004. – 424 с.
5. Комиссаров В.Н. Теория перевода (лингвистические аспекты): учебник для студентов институтов и факультетов иностранных языков: допущено Государственным комитетом СССР по народному образованию / В.Н. Комиссаров. – М.: «Высшая школа», 1990. – 253 с.
6. Описательный перевод // Информация с официального сайта «Большая энциклопедия нефти и газа» @ Copyright НПЦ Знание 2022 [Электронный ресурс]. – Режим доступа: <https://www.ngpedia.ru/id245573p1.html> (Дата обращения: 25.11.2025г.).

7. *Рецкер Я.И.* Теория перевода и переводческая практика: Очерки лингвист. теории перевода. – М.: «Междунар. отношения», 1974. – 216 с
8. *Санарова Е.Г.* Трудности достижения эквивалентности при переводе слов-реалий / Е.Г. Санарова // Научный вестник Южного института менеджмента, 2014, № 4. – Краснодар, 2014. – СС. 45–48. – EDN: [TOECPPE](#).
9. *Томахин Г.Д.* Реалии в языке и культуре // Иностранные языки в школе, 1997, №3. – М., 1997. – СС. 13–18.
10. *Федоров А.В.* Основы общей теории перевода (лингвистические проблемы): для институтов и факультетов иностр. языков. Учеб. пособие. – 5-е изд. – СПб.: Филологический факультет СПбГУ; М.: ООО «Издательский Дом “Филология три”», 2002. – 416 с.
11. *Хакимова Ш.Р.* Приемы перевода интернациональных реалий / Ш.Р. Хакимова. – Текст: непосредственный // Филология и лингвистика в современном обществе: материалы II Междунар. науч. конф. (г. Москва, февраль 2014 г.). – Т. 0. – М.: Буки-Веди, 2014. – СС. 179–181 [Электронный ресурс]. – Режим доступа: <https://moluch.ru/conf/phil/archive/107/4876> (Дата обращения: 20.11.2025г.).
12. Պատճենում (լեզվաբանություն) [Էլեկտրոնային ռեսուրս] : – Հասանելիության ռեժիմ՝ <https://l1.su/bbpO> (Դիմելու ամսաթիվ՝ 20.11.2025թ.):

**ԱՆԳԼԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՐԻՔ ՑՈՒՅՑ ՏՎՈՂ
ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ
ՑՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մ.Ա. Ադամյան
mariam@leadavenue.com

*Բ.գ.թ., Անգլերենի հաղորդակցության ամբիոնի դասախոս,
Վ.Յա. Բրյուսովի անվ. պետական համալսարան,
Երևան, Հայաստանի Հանրապետություն*

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում ուսումնասիրվում են անգլերենի և հայերենի տարիքը ցույց տվող միավորների թարգմանական առանձնահատկությունները թարգմանության տեսության

շրջանակներում: Վերլուծությունը հիմնված է համարժեքության և թարգմանական փոխակերպումների տեսությունների վրա: Հատուկ ուշադրություն է դարձվում թարգմանական այնպիսի հնարներին, ինչպիսիք են պատճենումը, համարժեք, նկարագրական և մոտավոր թարգմանությունները: Հետազոտությունը բացահայտում է նաև թարգմանական բացերի դեպքեր, որոնք պայմանավորված են լեզուների միջև առկա բառապաշարային, ռճական և մշակութային տարբերություններով: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ թարգմանական ռազմավարության ընտրությունը կախված է թարգմանչի նպատակից, համատեքստից և սկզբնաղբյուր տեքստի իմաստային ու ռճական առանձնահատկությունները պահպանելու անհրաժեշտությունից: **Բանալի բառեր՝** թարգմանություն, թարգմանական փոխակերպումներ, համարժեքություն, պատճենում, նկարագրական թարգմանություն, մոտավոր թարգմանություն, «տալիք» իմաստային դաշտ:

TRANSLATION PECULIARITIES OF AGE-DENOTING UNITS IN ENGLISH AND ARMENIAN

M. Adamyan

mariam@leadavenue.com

*PhD, Lecturer at the Department of English Communication,
Brusov State University,
Yerevan, Republic of Armenia*

ABSTRACT

The article examines the translation peculiarities of age-denoting units in English and Armenian within the framework of translation theory. Relying on the concepts of equivalence and translation transformations, the study analyzes equivalent, calque, descriptive, and approximate translations. Special attention is paid to translation gaps caused by lexical, stylistic, and cultural diffe-

rences between the two languages. The research concludes that the choice of translation strategy depends on the translator's aims, context, and the need to preserve semantic and stylistic features of the source text.

Keywords: translation, translation techniques, equivalence, calque (loan translation), descriptive translation, approximate translation, semantic field of «age».

Информация о статье:

статья поступила в редакцию 12 декабря 2025 г.,

подписана к печати в номер 17 (21) / 2026 – 25.06.2026 г.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

Главный редактор



Саркисян И.Р. – д.п.н., профессор, профессор кафедры русского языка и профессиональной коммуникации Института филологии и межкультурной коммуникации Российско-Армянского университета, заслуженный профессор РАУ.

 **ORCID:** [0000-0002-4377-1601](https://orcid.org/0000-0002-4377-1601)

SPIN-код: [8936-7319](#), **AuthorID:** 1056296

Составитель, технический редактор, вёрстка и дизайн



Акопян А.С. – ст. преподаватель кафедры русского языка и профессиональной коммуникации Института филологии и межкультурной коммуникации Российско-Армянского университета; ст. преподаватель Санкт-Петербургского политехнического университета Петра Великого (СПбПУ); доцент Медицинского института имени Меграбяна; Действительный член (академик) Международной Академии Нейронаук (МАН, РА).

 **ORCID:** [0000-0001-9263-6791](https://orcid.org/0000-0001-9263-6791)

SPIN-код: [1465-8539](#) / **Author ID:** 1045228

Корректоры:

Акопян А.С., Согомонян М.Р., Мурадян К.Г.

Адрес Редакции научных изданий
Филиала Московского государственного университета
им. М.В. Ломоносова в г. Ереване:
0025 РА, г. Ереван, ул. Вардананц 17
e-mail: po@msu.am

Заказ № 25

Подписано к печати – 28.06.2026 г.
Формат 60х84¹/₁₆. Бумага офсетная № 1.
Объем – 19,125 печ. л. Тираж 250 экз.